

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-րդ ՏԱՐԻ

24-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՈՒՄ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրօգրամով և նոյն ուղղու-
թեամբ: Մերը ստանում ենք սեփական հեռագրի միջոցով:

ԲԱՍՆԱԿԱՆ ԴՐԱԿԱՆ ԴՐՈՒՄ ԹԻՆԻՆ ԲԱՅՎԱԾԵ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
նը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բազմաթիւ և Բարձրագոյն փողոցների անկիւնը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
թղթեր ուղարկելիս, պէտք է ղիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գիւղական ազգայնականները. Հեռագրի-
ներ. Հայոց հարցը և դիւրանաբանութիւնը. Թիւրքաց
պաշտօնական զեկուցումը պոլիտեքլիսիանների
մասին. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թաւորութիւնը.
Միջազգայն Պատկանեան. խիստ հակադրութիւնը ան-
հրաժեշտ է. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Աւստրիայից. Նամակ Գերմա-
նիայից. ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Առաջագիծ ուսումնական
հայեացքը:

ՄԵՐ ԳԻՒԼԱԿԱՆ ԱԶԳԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ է լուրջ ուղղորդութիւն դարձ-
նել այն բազմութիւն հասարակական գան-
ցառութիւնների և շարագործութիւնների
վրա, որոնք ամեն օր տեղի ունեն մեր գիւղա-
կան ազգայնականութեան կեանքի մէջ և ու-
րոնց դէմ վաղուց բողոքում է գիւղական
ամբողջը:

Վերջերք գիւղական կեանքի ո՞ր կողմն
էլ կամենաք. ամեն տեղ կը տեսնէք ան-
կապ վիճակի, անհարկի անհոգութիւն, մի
շարք գեղծութիւններ, որոնք ոչ միայն խա-
ղաքում են գիւղական կեանքի կանոնաւոր

զարգացումը, այլ և տալիս են նրան վնաս-
տակար ընթացք:

Գիւղական ժողովները յաճախ
միայն երեւակայական են: Ժողովներ կամ
չը կան բոլորովին և գիւղական գործերը
վճարում են մասնաւոր կերպով, մի քանի
գօրեղներ ձեռքով, կամ հասարակա-
կան ժողովները կազմվում են գիւղացիների
միայն մի խմբի մասնակցութեամբ. իսկ
համակոսականները կազմվում են ոչ թէ
ժողովներով, այլ կողմնակի կերպով, և
համակոսական թուղթը պատում է ար-
նից տուն և լցվում գիւղացիների ստորա-
գրութիւններով:

Հասարակական տուրքերը, որ
պէտք է գիւղացիների կարողութեան հա-
մեմատ բաժանվեն, բաժանվում են անար-
դար կերպով և յաճախ ծանրանում են
նրանց վրա, որոնք աղքատութեան և խեղ-
ճութեան պատճառով չեն կարողանում բո-
ղոքել, կամ թէ՛ բողոքում են չեն կարող-
անում դիմադրել: Եւ բողոքողը, մի քանի
փորձերից յետոյ, տեսնելով որ միայն վը-
նասվում է իր բողոքներից, ստիպված է
զգրում լռել և համբերութեամբ տանել
զրկանքները:

Սին կատարեալ լուրթիւն էր տիրում ուսումնա-
նական մէջ, և երեխ, ուսում կրթված հասարակու-
թեան աշակերտ մեծամասնութեան համար կատա-
րեալ նորութիւն էր Ռուսաստանի մէջ մի ինչ
որ հնչեական հարցի: Գոյութիւն ստանալը
մասնաւոր այն կրթութիւնը և անհամբերութե-
թիւնը, որոնք յանկարծ յայտնվեցան այդ հարցի
քննութեան ժամանակ:

Ինչից խիստպէս այդպէս աղմուկ ծագեց Ռու-
սա-Հայաստանի մասին: Պէտք էր, հշտարիտ, ըն-
դունել, որ այդ Ռուսա-Հայաստանը իրապէս գո-
յութիւն ունի երկրաբանական վրա, իսկ այն հրապա-
րակախութիւնը, որոնք Ռուսաստանում աղմուկ
բարձրացրին հայոց գործի պատճառով, այդ հա-
սարակ հանգամանքը չեն ընդունում կամ չեն ու-
ղում ընդունել: Հայաստանը գոյութիւն ունի Ռու-
սաստանի սահմաններում (Վանձակի, Երեւանի,
Կարսի նահանգներ) և այնտեղ, ուրեմն, գոյու-
թիւն ունեն հայեր, որոնք զաւանում են իրանց
լուսաւորչական կրօնը, խօսում են իրանց հայե-
րէն լեզուով, կարդում են իրանց բազմադարեան
գրականութիւնը, ուսումնում են, մտածում, աշ-
խատում, բազմանում, մի խօսքով իրանց կու-
րսեան են տեսնում, իրանց լուսաւորութիւնը,
իրանց բարօրութիւնը, կեցութիւնը... Այս ամե-
նը ընտանի է. այս ամենը անխուսափելի է. այս
ամենը ցանկալի է: Եւ եթէ այս ամենը մտաբե-
րել, եթէ մտաբերել այդ շատ հասարակ և ան-
պայման անխուսափելի հանգամանքը, այն ժա-
մանակ, հարկաւ, կիմացվի, որ ոչ մի հայկական

Գիւղական հողերը չեն բաժան-
վում կանոնաւոր կերպով գիւղացիների մէջ:
Ով մի անգամ, արանից 20—50 տարի ա-
ռաջ և աւելի վաղ, ձեռք է գցել գիւղա-
կան հողի մի խոշոր կտոր, այլ և ձեռքից
բաց չէ թողնում նրան, չը նայելով որ
գիւղում նրա հարեանը մնացել է առանց
հողի, կամ շատ փոքր հողաբաժնով: Հիշե-
ք, մեծ հողատէրը երբեմն վերցնում է իր
վրա և հարկի մեծագոյն մասը, բայց գիւ-
ղացիների անհող կամ սակաւահող մասը
վաղուց յայտնել է, որ նա ուրախու-
թեամբ կը վերցնի իր վրա հարկաւոր
տուրքը, եթէ միայն նրան հող տրվի,
որից նա կարողանայ իր ապրուստը ապա-
հովել:

Այս և արանց նման հարցերը ամեն օր,
ամեն մի քայլում մտատանջութեան ա-
ռարկայ են դարձել գիւղական հասարա-
կութեան համար և նա միջոցներ չէ ձեռք
առնում կառավարելու իր գործերը կանո-
նաւոր կերպով: Յաճախ վնասակար, արա-
տաւոր, յանցաւոր մարդիկ տարիներ շա-
րունակ ծնելով են գիւղական կեանքը, իսկ
հասարակութիւնը անկարող է ազատվել
նրանցից:

Գիւղական հասարակական գործակալու-
թեան մէջ արդարութիւն և կանոնաւորու-
թիւն պահպանելու համար կարեւոր է, որ
լինի մի առանձին հաստատութիւն, որ
ժամանակ առ ժամանակ քննի և ստու-
գի գիւղական վիճակները կազմելու եղանակը,
նրանց գործադրութիւնը և ապահովի
գիւղական մեծամասնութեան իրաւունքները:

Լինի այդ հաստատութիւնը գեմատ փո-
թէ գիւղական գործերի յատուկ վարչու-
թիւն, նրա կարեւորութիւնը շատ զգալի
է դարձել: Այդպիսի կարեւոր խնդիրները
չեն կարող յետաձգվել:

ՀԵՌԱՅԻՐՆԵՐ (Ռուսաց գործակալութեան)

Կ. Պօլիս, 29 նոյեմբերի: Սահլ-փաշան,
նոյեմբերի 27-ին, երեկոյեան, վերադարձաւ
իր տուն:

Հարց Ռուսաստանում չը կայ և չը պիտի լինի:
Էլ ինչ առիթով են աղմուկ բարձրացնում մեր
քաղաքները: Սրանց մասին աւելի մի բան խօսել
հաղի թէ արժենայ, ուստի խօսենք գործի մա-
սին:

Պրօֆէսոր Ա. Ֆանաթիեվ մի փոքրիկ հեղինա-
կութիւն ունի՝ Հնչարկէի III-ի արտաքին քա-
ղաքականութիւնը վերաբերում: Մեզ այսօր հե-
տաքերը վերջին Բօնապարտի քաղաքականու-
թիւնը չէ և ոչ էլ Ա. Ֆանաթիեվի քննութիւնը զրա-
մասին, այլ միայն մի փոքրիկ երես այդ քննու-
թիւնից: Յայտնի է, որ Հնչարկէի III միջադա-
շին քաղաքականութեան մէջ շատ էր հակված
դէպի «ազգայնական սկզբունքներ»: Այդ առիթով
Ա. Ֆանաթիեվ քննում է նոյն այդ սկզբունքը:
«Այժմ կարելի է արձանագրել մի հետաքրքրա-
կան երևոյթ, ասում է Ա. Ֆանաթիեվ, դա այն հա-
մոզմունքը զարգացումն է, որ ազգայնական միա-
ցումից դուրս չէ կարող լինել քաղաքական միա-
ցումն: Այդ համոզմունքից յաջորդաբար բխում
են այն սխառեմները, որոնց միտքն է, որ մի ազ-
գութիւն կլանէ միւսին կամ զուրս մէջ մի յայտ-
նի երկրից: Որքան սատակ կերպով է այդ հա-
մոզմունքը գերում մարդկանց մտքերը, այնքան
աւելի շատ տեղի կունենան ընդհարումները ազ-
գայնական համար և այդ ընդհարումների հետ
կապված թշուառութիւնները: Այսպիսի հայեացքը
կարելի է դասել այն հայեացքի հետ, որ գոյութիւն
ունէր XVI և մասամբ XVII դարում կրօնի վերա-

Կ. Պօլիս 30 նոյեմբերի: Ռուսաց դե-
պուտատները մօտ ունկնդրութեան ժա-
մանակ, հաղորդելով նոյեմբերի 24-ին դե-
պուտատների կոնֆերենցիայի կայացրած վճիռը՝
պնդել երկրորդ պահանջաւորութիւնը թող տալու
վրա, պաշտպանեց այդ առաջարկութիւնը
Թագաւոր Կայսրի անունից: Նոյեմբերի
28-ին սուլթանը ստորագրեց իրաւէ, որով
թող են տրվում երկրորդ պահանջաւորութեանը,
որի մասին և հաղորդվեց դեպուտատներին:
Այդպէս Սահլ-փաշայի տան կողքի ար-
քունական շինութիւնը, որը իջեւանատեղի
էր արաբական շէյխների համար: Հիմք կայ
կապիստիւն, որ հրեշտաձգութիւն է եղել:
Սօֆիա, 30 նոյեմբերի: Վերջին օրերս
աւստրիացի և անգլիացի մօտ 100 օֆիցեր-
ներ անցան դէպի Կ. Պօլիս խիստ ծպտեալ
կերպով:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ ԵՒ ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

Հա մպս օնի նամակը

Վանի փոխ-հրապարտ շաւուսի հետեւալ դե-
կուցագիրն է ուղարկել Լուր Սուրբիբիւն, Մու-
շից, հոկտեմբերի 4/16-ից:

Եւս պէտք է հաշիւ տամ, թէ օգնութեան
գործը Սասունում ինչպէս կատարվեց: Գիւղերի
տների մեծ մասը վերաշինվել են, թէ և մեծ եր-
կիւղ ունեն, որ այժմեան ցրտերը և սաստիկ
ձմեռը նոր ցաւեր և հիւանդութիւններ առաջ
չը բերեն նրանց մէջ, որոնք դեռ գուրկ են
քնակաքանդակից: Շատ ափսոսալի է, որ զինու-
թական իշխանութիւնը չուզեց մի քանի վրան-
ներ տալ: Հարկաւոր հաղուստը, հայհամարիւն-
քը, տաւարը ձեռք են բերվել, որքան որ դրա-
մական միջոցները և պարագաները թող են
տուել:

«Սկզբում ստացած 2,000 լիւրան, որի վրա ա-
ւելացաւ յետոյ ստացած 3,000 և այժմ ուր
Ֆիլիպ Կերրիի հաղորդած լուրը նոր 5,000 լիւրա
ուղարկելու մասին, որով ընդամենը հանգանակ-
վել է այդ գործի համար 10,000 լիւրա, իմ կար-
ծիքով, բաւական են փրկելու Սասունի և Տաւու-
րիկի բնակիչների կեանքը և փոքր ի շատէ լրաց-
նելու անցեալ տարի նրանց կրած մեծ վնաս-
ները»:

Երբմամբ: Այն ժամանակ տիրում էր այն համոզմուն-
քը, որ պետութեան հաստատուն մնալու համար պա-
հանջվում է կրօնների միացում: Մի այդպիսի հա-
յեացքը շնորհիւն էր, որ տեղի ունեցաւ Բար-
թոլիսիսեան գիշերը և կատարվեցին սարսափ-
ներ, որոնք Նանտի դաշնադրութեան ջնջման հետ
զուգընթացաբար անցան: Պատմութիւնը ապա-
ցուցեց ոչ միայն այդ հայեացքի սխալը, այլ
և հասցրեց մարդկութիւնը այն իմացակա-
նութեան, որ համաբարդութիւնը կրօնական հա-
ւատալիքների մէջ, կրօնական զգացմունքի ան-
բունարարելի պահելը կազմում է, ընդհակա-
ռակին, հասարակական առողջ կեանքի հիմքը: Մի
քանի սուր փաստերով պատմութիւնը ուսուցա-
նում է, որ հենց ֆանատիկոսութիւնն ու կրօնա-
կան անհամբերողութիւնն էին թուլացնում, նոյն
իսկ քանդում քաղաքական կեանքը, բայց երբեք
չէին ամրապնդում նրա հիմքը: Անցեալի դասե-
րից խրատված՝ մենք ենթադրում ենք, որ այդ
հայեացքը, որպէս թէ անհրաժեշտ է ազգայնու-
թեան միացումը իբրեւ պայման պետական միու-
թեան, կարող է իր ծայրահեղ զարգացման մէջ
բերել սղալի հետեւանքներ: Նա ընդունակ է մի-
այն զրգուել ազգայնական ֆանատիկոսութիւն,
որը, մի անգամ բորբոքվելուց յետոյ, չուտ չի
մարի և նրան հանգցնելու համար կը պահանջվեն
արեւան գետակներ ոչ սակաւ, քան այն գետակ-
ները, որոնց պահանջում էին կրօնական պատե-
րաղները» (Եր. 61—62):

Ահա XVI և XVII դարերի կեդք և վտանգա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՋԱԳԻՐ ՌՈՒՍ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՅԵԱՑՔԸ

(Պատասխան ուսումնականներին)

«Русское Богатство» ամսագրի № 10-ի մէջ
կարդում ենք մի լուրջ և անկողմնապահ յօդուած,
որի առաջին մասը նուիրված է հայերին և պա-
րունակում է իր մէջ կտրուկ պատասխան այն
թիւռ ազգայնական հրապարակախօսների դէմ, որոնք
այնքան բազմացել են ուսումնականութեան մէջ
և արհեստ են դարձրել ամեն տեսակի գրգռա-
րութիւնները դնել լայնածաւալ Ռուսաստանի ան-
կրօններում ապրող ազգութիւնների վրա, ինչպէս
ներկայումս հայերի վրա: Որպէս զի ցոյց տանք,
թէ ինչպէս է մտածում ուսումնական և ինտե-
լիգենցիայի շահագործող և առաջադէմ մասը,
մենք քաղաքածօրէն առաջ ենք բերում մի քանի
կտորներ այդ յօդուածից, որի հեղինակն է յի-
շեալ ամսագրի աշխատակից Ս. Խժակով:

Խիստպէս, մեր առաջ հայկական մի հարց չէ,
այլ երկուսը—թիւրքահայերի և ուսումնական
հարցերը: Առաջին հարցի մասին խօսելով, ուսու-
մանուրը առիթ է գտել առաջ քաշել և երկրորդ
հարցի քննութիւնը: Մինչև այժմ վերջինիս մա-

Կայ մի բան, որ կարևոր և ուժեղ է ազգա-
բուսական և լեզուաբանական ազգակցութիւնից

անուանված և որ ներկայացնում է Ասլանի վերջին րօպէները, կտակը, մահը:

Այս համառօտ նկարագրից կարելի է եզրակացնել, թէ բնական ինչ արժանաւորութիւն ունի «Ասլան Բալասին»: Էֆֆէկաներ, իսկապէս, շատ կան, ամեն ինչ յարմարեցրած է տպաւորութիւն գործելու: Եւ տպաւորութիւն ստացվում է, երբեմն նոյն իսկ շատ ազդու տպաւորութիւն Բայց և այդպէս, պիէսը մի ամփոփ, ամբողջացրած գործի յատկութիւնը չունի: Ձեր աչքի առաջ տեղի են ունենում տեսարաններ, գիտում, գալիս են մարդիկ, կուռում են, լաց են լինում, ուրախանում են, յաղթում են, մեռնում են: Բայց կարծէք այդ բոլորի մէջ կապը շատ թույլ է, կարծում էք, որ այդ տեսարաններից մի քանիսը կարելի էր դուրս գցել առանց վնասելու խաղին: Մենք կարծում ենք, որ դրա պատճառն այն է, որ գործողութիւնների այդ անընդհատ շարքերով չէ անցնում մի տիպի կամ մի գաղափարի աստիճանաբար զարգացումը:—Վրէլ-խաւոր հերոսը Ասլանն է. նա հէնց առաջին գործողութեան մէջ դուրս է գալիս իբրև ամբողջացած մի տիպ, որի առաջ անուանեալ գործողութիւնների մի շարք կայ դրած, գործողութիւններ, որոնք կատարվում են ոչ իբրև Ասլանի միտքն ու հոգին արտայայտող միջոցներ, այլ իբրև հանգամանքներ, որոնց նա յաղթում է, որոնցից ընկճվում է Բեմի Էֆֆէկաները տեսնողին ցոյց են տալիս համարեա մի բան—թէ ինչպէս էր Ասլանը իր ընկերներով մարդ սպանում: Իսկ թէ ինչպէս էին աղբւր անցքերը հերոսի վրա, ինչ տեսակ բնավորութիւն էին կազմում նրա մէջ, հոգեկան ինչ աշխարհ էր նա ներկայացնում միմեանց յաջորդող ճգնաժամերի մէջ—այդ բոլորը այնքան քիչ, այնքան թույլ է արտայայտված, որ թատրոնից հեռանալիս դուք զգում էք միայն տեսարանների, Էֆֆէկաների ազդեցութիւնը, որ, ի հարկէ, տեղական մի բան չէ:

Պ. Սարգսեանը, ի հարկէ, մեղաւոր չէ այդ պակասութեան մէջ. նա դրամատուրգ չէ, նա միայն փոխադրել է վէպը պիեսի: Պակասութիւնը գուցէ հեղինակինն է, որ միայն հայրենասիրութեան, սղբերի մի գեղեցիկ նկարագիր է տուել: Խօսել այդ մասին այստեղ միտք չունի:

Գալով ներկայացման, պէտք է արձանագրել, որ Արէշեանը Ասլանի դերում շատ լաւ տպաւորութիւն գործեց, այդ պատճառով էլ հասարակութեան անկերջ ծաղկանքներն արժանաւորաւ: Արէշեան ներկայացնում էր ինքն իրան հասկացող մի հերոսին, որ բարձր է պահում իր գիւղի, գիտէ հրամայել, ունակ լին անել: Եւ այդ տեսակ տանկով իր խաղը, նա պահպանեց նրա մէջ միանմանութիւն, չափազանցութիւնների չը դիմեց:—Վրոյ՞ Հասան-խանի դերում շատ լաւ էր. նրա արտաբերը, գրիմը բոլորովին համապատասխանում էին մի թուրք խանի արտաբերին:

մի բան, որ տիրապետում է այդ ազգայնութեան վրա և կառավարում է նրան: Բայց ինչ է դա: Պետական կամ կրօնական միութիւնը նայապէս, ինչպէս և ազգագրական ու լեզուապէս միութիւնը, կարող են երբեմն և մտնել որոշ հասկացողութեան մէջ, բայց կարող են և չը մտնել և երբեք այդ հասկացողութեան հիմքը չեն կազմում: Ուրեմն ինչն է մնում: Մենք է սեփական ազգային գիտակցութիւնը, պատասխանում է ընդհան: Թէ ազգագրական ցեղակցութիւնը, թէ լեզուն, թէ կրօնը, թէ պետական միութիւնը, բայց ամենից շատ ընդհանուր պատմութիւնը, ընդհանուր ազդողութիւնները և ընդհանուր պարտութիւնները, ընդհանուր փառքը և ընդհանուր տանջանքները, ընդհանուր աշխատութիւնները, հանրութեան օգտին կազմակերպում են այն գիտակցութիւնը, որ մարդկանց ահալին համախմբումները ձուռում է մի ազգայնական մարմնի մէջ:

Այդ պատճառով է, որ այն ազգայնական միութիւնը, որ բոլորում է բարոյական հիմունքից, որ թողնում է անհատների բարի կամքին միասին լինել, միասին ապրել և գործել, զանազանական, կրօնական, ազգագրական, լեզուապէս միութիւններից, որոնք առաջանում են բարոյապէս տարբերութիւն չունեցող սկզբունքներից: Հէնչ այս պատճառով էլ չէ կարելի, կամ չը պէտք է խառնել սկզբունքով բոլորովին տարբեր հասկացողութիւնները—ազգ և ազգայնութիւն: Ազգը, ասում է ընդհան, նոր եւ-

Միայն իզուր է նա կարծում, թէ խանական արժանաւորութիւնը կարելի է ցոյց տալ միանման բարձրաձայն խօսակցութեան մէջ: Գիւրիների հետ խօսելիս մի քիչ ծանր, աւելի հանդարտ, բայց ազդու ձևերը, խօսքը բոլորովին այլ տպաւորութիւն կը թողնէին: Միւս երկրորդական դերակատարները ընդհանրապէս չը փչացրին անսամբը: Կաղում էր միայն լեզուն: Արշալանի յատակ դաւառաբարձուի հոտն անգամ չը կար. կարծես գործողութիւնը երբանուրէն չէր կատարվում, այլ թիֆլիսի չըջկայքում, մինչև անգամ թիֆլիսի «Ժոննա» էլ հնչում էր բեմի վրա:

Ի վերջոյ մի նկատողութիւն: Հինգերորդ գործողութիւնը կամ պատկերը, մեր կարծիքով, բոլորովին աւելորդ է: Նախ Ասլանը այդտեղ մեռնում է, բայց ոչ հերոսի պէս և այդ հանգամանքը որքան փչացնում է տպաւորութիւնը: Երկրորդ, այդ լալկան տեսարանը հանդիսատեսների ջղերն է տալիս ու վրա անում, բայց ինչ օգուտ դրանից, երբ չորրորդ գործողութեան վերջում, այն ժամանակ, երբ Ասլանը ընկնում է գնդակից, վերջնականապէս կանգ է առնում ամբողջ պատմութիւնը և հանդիսատեսը այլ ևս սպասելիք չունի: Թատրոնը բոլորովին լիքն էր. չենք կարող այս առիթով մեր ուրախութիւնը չը յայտնել. հայ դերասանական խումբը անուշտ կը խրախուսվի հասարակական համակրութեան այս արտայայտութիւնից:

Բենեֆիցիանտ Սարգսեանին և Մատինեանին մի բանի ընծաներ տրվեցին:

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 30-ին, Թիֆլիսի խօջվանքի գերեզմանոցում թաղեցին մեր հին գործողներից մէկին՝ Միքայէլ Պատկանեանին: Հանգուցեալը պատկանում էր այն տաղանդաւոր տղային, որը տուեց Սերովլէ վարժապետ, տէր-Վարդէի, Գամառ-Վաթիկայի, պրօֆեսոր Գերովլէ Պատկանեանի:

Միքայէլ Պատկանեան յայտնի եղաւ հայ դրական շրջաններում իր «Մի ջի մարդ» կամ «Մօցիք ու լ» թատերական գրութեամբ, որի մէջ նա ծաղրում էր Թիֆլիսի հասարակութեան անկերթ մօղայափրութիւնը: Այդ պիեսը և նրա հետ միասին տպագրված դիվիսիոնալ յաճախ խաղացվել են թէ Թիֆլիսում և թէ գաւառներում:

Միքայէլ Պատկանեանը աշխատակցում էր բոլոր այն պարբերական հրատարակութիւններին, որոնք լոյս տեսան 50 և 60 թուականներին: Նա մասնակցել է և «Ինկվիզիցիոն» պատմութեան և անշխարհամարութեան, որ ձեռնարկել էր Զակար Կարինեանի հետ միասին: Նա ունի դրած և ուսուցիչ լեզուով յօդուածներ ընթացիկ մի քանի հարցերի մասին:

Միքայէլ Պատկանեանը իր ժամանակ յայտնի

րօպական պատմութեան արգասիքն է: Հին աշխարհը ճանաչում էր ազգայնութիւն (ազգագրական միութիւն), հաւատ (կրօնական միութիւն), հայրենիք (պետական միութիւն), նա չէր ճանաչում ազգ, այս բառի ամենատարբեր բարձր մեծութիւնը, որ այդ ուղում են նրա մասնակցելը կազմող ընկալութիւնները, չը նայած որ այդ ընկալութիւնները կարող են չը լինել միացած ոչ պետական, ոչ կրօնական, ոչ ազգագրական, ոչ էլ լեզուաբանական կապերով: Ունենալով տարբեր ծագումներ, խօսելով տարբեր լեզուներով, բաժանված լինելով շատ պետութիւնների մէջ, դաւանելով տարբեր կրօններ, ազգը կարող է լինել մի, եթէ բոլոր բաղադրիչները, բաղադրիչները, որ այդ ուղում են նրա մասնակցելը կազմող մշակել են պատմական միութեան մի ընդհանուր գիտակցութիւն, մի ընդհանուր զգացմունք, որ տանում է նրանց դէպի այդ միութիւնը: Միւս կողմից, որ և է էլզացիներ, որոնք գերմանացի են արիւնով, խօսում են գերմաներէն, դաւանում են Հռոմիսի միւս ասիւրում ապրող գերմանացիների հետ մի կրօն և միացած են նրանց հետ մի պետութեան մէջ, մնում են ֆրանսիական ազգի մի մասը: Այդպէս է նրանց ազգային գիտակցութիւնը, իսկ մարդկանց մի յայտնի համայնման ընդհանուր գիտակցութիւնն է միայն, որ այդ համայնմանը դարձնում է ազգ, տալիս էր բարոյական վաւերացումն այդ համակցութեան և դրա հետ միասին պարզում է նրան

էր և իբրև գաղութական գործող: Նա եղել է և ուսուցիչ ու տեսիչ պաշտօնակատար Ներսիսեան գաղութում: Թիֆլիսի ծերունիների մէջ շատերը եղել են նրա աշակերտ և յիշում են նրան երախտագիտական զգացմունքով:

Վերջին քսան տարվայ ընթացքում նա հեռացել էր գործող շրջաններից և ապրում էր առանձնացած, և բոլորովին մոռացված էր:

Համեստ յուզարկաւորութեանը կարողացան մասնակցել Ներսիսեան գաղութի ուսուցիչները և հոգաբարձութեան ներկայացուցիչները. Պ. Պոստանցը խօսեց մի դամբանական:

Վաղը, կիրակի, ամսիս 3-ին, Վանքի մայր եկեղեցում, Ներսիսեան գաղութի հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, տեղի կունենայ հանդուցեալի յիշատակին հօգ և հանգիստ:

ԽԻՍ ՀԱՊՈՂՈՒԹԻՒՆՆ ԱՆՀԱՐԱԺԵՏ Է

Թիֆլիսի չըջկայքում շարունակվում է տաւարի ժանտախտը: Թէ մտացու և թէ կաթնատու անասուններ կոտորվում են մեծ քանակութեամբ: Նահանգական վարչութիւնը խափու պատուիրել է, որ հսկեն հիւանդ անասունների վրա և թույլ չը տան նրանց միւր վաճառանոց հանելու:

Սակայն եղած հսկողութիւնը դեռ շատ հեռու է կատարելութիւնից և կասկած կայ, որ հիւանդ միւր չէ ոչնչացվում տեղուտեղը: Նոյն իսկ այնպիսի փոքր ի շատէ բարեխեղճ մարդիկ, ինչպէս են գերմանացի կօլոնիստները, աշխատում են հսկող աչքից հեռացնել միւր և յայտնի չէ թէ ինչ են անում նրան:

Ժանտախտի տարածումը կանգնեցնելու և սահմանափակելու համար հարկաւոր է, որ ժանտախտով հիւանդ տաւարը բոլորովին կոլեզվով, մեռած անասունի մարմինը ամբողջապէս թաղվի հողի մէջ: Մինչդեռ յաճախ տաւարատերերը, ցանկանալով թեթեւեղել իրանց կրած վնասը, սատկած տաւարի կաշին քերթում են և էփան գնով ծախում, որով և նպաստում են հիւանդութեան տարածման: Ժանտախտի գլխաւոր տարածման պատճառներից մէկը հէնց այդ կաշիների վաճառումն է, որի առաջը պէտք է առնել խիստ հրկողութեամբ:

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թիֆլիսի դուռայի կազմած յանձնաժողովը նոյեմբերի 29-ի նիստում վճռեց յաւերժացնել Թաղաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու պատկերաւորութիւնը հետեալ ձեռնարկութեամբ.— հիմնել աշխատանքի տուն Թիֆլիսում, 50 հոգու համար, որոնցից 24 աղամարդ, 16 կին, 5 աղայ և 5 աղջիկ: Այդ հիմնարկութեան ծախսը պէտք է հոգայ քաղաքը:

այնպիսի դիմացկանութիւն և սնդութիւն, որ պիտի անկարող է տալ որ և է ուրիշ միացումն,—ոչ պետականը, ոչ կրօնականը, ոչ լեզուապէս, նոյն իսկ բոլորը միասին վերցրած:

Այս հասարակ ճշմարտութիւնները մարդկութիւնը մոռանում է սիրով, բայց միշտ թանգ է նստում այդ մոռացութիւնը: Մենք արդէն բերինք Աֆանասիեի գրքից ցուցմունք, թէ ինչպէս էր մարդկութեան վրա թանգ նստում այն համոզմունքը, թէ կրօնական միացումից դուրս չէ կարող լինել հաստատուն և դիմացկուն հանրային կեցութիւն: Յարգելի պրօֆեսոր յետոյ ցոյց է տալիս, թէ որքան վտանգաւոր է համարման և զուգընթաց այն մոլորութիւնը, որպէս թէ ազգաբարձական և լեզուապէս միութիւնից դուրս չէ կարող լինել հաստատուն և դիմացկուն նոյնն է. մի և նոյն վտանգը, մի և նոյն հետեւանքները, այն է հասարակութեան հաստատուն և դիմացկուն հիմքերի թուլացումն, ուղղակի արգելքներ, որոնք խանգարում են ընդհանուր գիտակցութիւնը և ընդհանուր զգացմունքը, խանգարում են մի հասարակութեան անցնել անդիտակցական-բնական, կամ գիտակցական-հարկադրական ձևերից դէպի բարձր, գիտակցորէն—համարալի, ինքնաբերաբար համաձայնեցրած, բարոյական ձևը: Այդ բոլոր առեւտրութիւնները, հրապարակախօսների այդ բոլոր արշաւանքները այս կամ այն ազգայնական, կամ դաւանական համախմբումների դէմ դաւանում են այն խոշորոտե-

Մասնաւոր նամակներով հաղորդում են, որ Սարգսեան և Վանքի մէջ կաբաւաններ իրթեկութիւնը համարեա դադարել է: Վանք պաշարման դրութեան մէջ է: Հայերը մեծ զգուշութիւն են գործ դնում և տներից շատ սակաւ են դուրս գալիս:

Մեղ հաղորդում են, որ հարց է յարուցված Սուխումի շրջանում բանալու մի գիւղատնտեսական ընկերութիւն, իբրև բաժին կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան: Մրադիր այժմ ընկնում է ագլիխատարացիայի կողմից և կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի մէջ:

Ասարխանից, Յովհաննէս Կիտայեանից ստացանք 50 րուբլի, «Մշակի» 1896 թվի հինգ օրինակի բաժանորդագիրն: Չորս օրինակը նուիրատուն դնում է մեր խմբագրութեան տրամադրութեան տակ: Մենք կը յայտնենք «Մշակի» յաջորդ համարներից մէկում, թէ որտեղ կուղարկենք այդ համարները:

Կառավարական բարձր շրջաններում, «Гражданин» լրագրի ասելով, հարց է յարուցված կովկասի ազգաբնակչութիւնը դէնք կրելու իրաւունքի տեսակէտից, հաւասարեցնել կայսրութեան մնացած ազգաբնակչութեան հետ:

Թիֆլիսի նահանգապետը դիմեց քաղաքապետին՝ առաջարկելով քաղաքի կողմից երկու ներկայացուցիչ ընտրել՝ թաղապետութեան հանդիսին մասնակցելու համար: Այդ ներկայացուցիչները կընտրվեն քաղաքային դումայի ղեկավարների նիստերից մէկում:

Օղեսսպոլ գիտաւորութիւն կայ բանալ տեխնիկական բարձրագոյն դպրոց՝ մեքենայաբանական և ճարտարապետական բաժիններով: Այդպիսով համարալիս Ռուսաստանում երկու տեղ կարելի կը լինի սովորել տեխնիկական գիտութիւններ՝ խարկովում և Օղեսսպոլում:

Նոյեմբերի 29-ին օպերային խումբը ներկայացրեց Վէրդիի «Աիդա»: Խաղացի տաղանդաւոր կոմպոզիտորի այս նշանաւոր օպերան միշտ մեծ հաճոյքով է լսվում և այս անգամ էլ մեծ բազմութիւն էր գրաւել թատրոն, մասնաւորապէս նոր հրաւիրված Խաղացի երգիչ Մարիա պիտի մասնակցեց Րադոնցի դերում: Պ. Մարիայի ձայնը թէ և ուժեղ չէ, բայց դուրեկան է և ակոր-ժելի, հնորհիւ իր փափկութեան և հարթութեան: Նա երգում է աշխոյժով, զգացմունքով և բնական: Արդարեւ դերը կատարեց տիկին Սօֆիա-կայա, որ նոյնպէս աջողութիւն ունեցաւ իր զգացված երգեցողութեամբ, թէ և ձայնական մասում պակասութիւնից բոլորովին դեմ չէ:

րը, որոնք ուշացնում են զանազան աղբւրթիւններից մի ամբողջ ազգ կազմել:

Ընդհանուր աշխատութիւն, ընդհանրութեան օգտին, բնակչութեան բոլոր համախմբումների փոխադարձ հոգացողութիւնների և փոխադարձ բարեացական ուշադրութեան գիտակցութիւնը—ասան այն հողը, որ ստեղծում է միացող ազգ, թէ և նա պարունակել իր մէջ ազգագրական, լեզուաբանական, դաւանական, կուլտուրական տեսակէտից և ինքնուրոյն համախմբումներ և ամբողջ ժողովուրդներ: Եւ այդ ինքնուրոյնութիւնները ոչ միայն պարտաւոր չեն անստանալ վնաս հասցնել ամբողջ ազգի զարգացման, այլ հէնց իրանց զանազանութեամբ և բազմակողմանի տարբերութեամբ կարող են նպաստել քաղաքակրթութեան և նիւթական ու հոգեկան կուլտուրայի աւելի փարթեմ ծաղկելուն:

Այսպէս է վկայում առողջ դատողութիւնը, նորագոյն գիտութիւնը: Այսպիսի խեղացի, լայն հայեացքներ է պարզում այն միտքը, որ չէ սահմանափակված նեղ միտումներով (ինչպէս անում է ուստաց խաւարաբիտ մամուլը), այլ ուղում է տեսնել համայն մարդկութեան երջանկութիւնը, հիմնված եղբայրական փոխադարձ սիրով վրա:

Մենք վկայ ունենք ամբողջ պատմութիւնը և անսխալ կերպով կարող ենք ասել, որ խաւար մտքերը չեն չինել երբեք, այլ քանդել են միշտ:

